3 հունիսի 2015 թ. N 337-Ա

ք. Ստեփանակերտ

ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Անվտանգության խորհրդի 2015 թվականի մայիսի 25-ի նիստի ընթացքում հանրապետության Նախագահի կողմից տրված հանձնարարականները և 2015 թվականի հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի անկորուստ կազմակերպման ու ընթացքում ծագած հարցերի օպերատիվ կարգով լուծման անհրաժեշտությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ստեղծել հանրապետական օպերատիվ շտաբ և հաստատել նրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանրապետական օպերատիվ շտաբին՝

1) կազմել իրականացվող միջոցառումների ծրագիր և խստիվ առաջնորդվել դրանով.

2) իրականացվող միջոցառումների և առկա իրավիճակի մասին տասնօրյա պարբերականությամբ տեղեկություններ ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմ.

3) մինչև 2015 թվականի սեպտեմբերի 1-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմ ներկայացնել ամփոփ հաշվետվություն բերքահավաքի ընթացքում կատարված աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ աջակցել և ակտիվ մասնակցություն ցուցաբերել բերքահավաքի ընթացքում իրականացվող միջոցառումներին:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայությանը՝ բերքահավաքի ենթակա տարածքներում հակահրդեհային անվտանգության ապահովման համար 2015 թվականի հունիսի 7-ից տեղադրել շարժական ճամբարներ, սահմանել շուրջօրյա հերթապահություն՝ ապահովելով կապի համապատասխան տեխնիկական միջոցներով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ համայնքների բնակչության, հողօգտագործողների մասնակցությամբ ճամբարներում ստեղծել շուրջօրյա հերթապահություն, յուրաքանչյուր ճամբարում ունենալ թրթուրավոր տրակտոր, հրդեհի մարման առաջնային միջոցներ, բնակչության շրջանում լայն բացատրական աշխատանք ծավալել բերքահավաքի հետ կապված անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ, կանխել հնձված տարածքների ինքնակամ՝ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության համաձայնության կամ մասնակցության, հրկիզման դեպքերը, ինչպես նաև բերքահավաքի բնականոն գործընթացին խոչընդոտող ցանկացած երևույթ:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերին և «Արցախուղի» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ բերքահավաքի ենթակա տարածքներ տանող ճանապարհների եզրերը բուսականությունից մաքրելու ուղղությամբ:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ անտառապահների ուժերով կազմակերպել շուրջօրյա հերթապահություն, արգելել անտառներում և անտառահատվածներում կրակի վառումը:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությանը՝ ձեռնարկել բոլոր միջոցառումները հրդեհների կամ հրկիզումների դեպքում մեղավորներին հայտնաբերելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ բերքահավաքի ժամանակահատվածում կազմակերպել շրջիկ շտապ օգնության միջոցառումներ, հրշեջ շարժական ճամբարներին ապահովել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներով, շրջբուժմիավորներին՝ շիճուկներով:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ կազմակերպել մշակութային միջոցառումներ բերքահավաքի գործընթացում ընդգրկված քաղաքացիների համար:

11. Առաջարկել հացահատիկ մթերող տնտեսավարող սուբյեկտներին՝ բերքահավաքի ժամանակահատվածում կազմակերպել հացահատիկի շուրջօրյա անխափան ընդունում:

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հանրային հեռուստառադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զանգվածային լրատվական մյուս միջոցներին՝ պարբերաբար լուսաբանել բերքահավաքի և հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների գործընթացը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի հունիսի 3-ի
N 337-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ

Շտաբի պետ

Արայիկ Հարությունյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ

Շտաբի պետի տեղակալներ

Անդրանիկ Խաչատրյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
Արթուր Հարությունյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն

Շտաբի անդամներ

Վյաչեսլավ Դանիելյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալ
Սերգեյ Գրիգորյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար
Վալերի Գևորգյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավար
Վլադիկ Խաչատրյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավար
Կարեն Թովմասյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավար
Կարեն Եղիշյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավար
Վլադիմիր Կասյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավար
Սուրեն Խաչատրյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար

Ժիրայր Միրզոյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և վերաբնակեցման վարչության պետ
Գագիկ Նարիմանյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի վերահսկողական ծառայության ծրագրերի վերահսկողության բաժնի վարիչ
Աշոտ Բախշիյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**